



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

« 21 » *Տպիսիս* 2021թ. *67-Ն*

ք. Երևան

ՀՐԱՄԱՆ

**ԱԿՏՈԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՃՆՇԱԿԱՅԱՆԻ ԵՎ ՀԵՂՈՒԿ ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ
 ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԲԱՇԽԻՉ ԱՇՏԱՐԱԿԻ ԿԱՊԱՐԱԿՆՔՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ
 ԿԱԶՄՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2011թ. մայիսի 10-ի N298-Ն և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011թ. մայիսի 19-ի N772-Ն համատեղ հրամանի 1-ին կետը՝ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1101-Ն որոշման 150-րդ կետի պահանջներն ապահովելու նպատակով, «Զափումների միասնականության ապահովման համակարգ. Հեղուկ ածխաջրածնային գազալիցքավորման բաշխիչ աշտարակներ» ՉԿՄ.001-2019 ստուգաչափման մեթոդիկայի 8.2 կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության կողմից կապարակնքման սխեմայի կազմման ծառայություն:
2. Սահմանել ավտոգազալիցքավորման ճնշակայանի և հեղուկ ածխաջրածնային գազալիցքավորման բաշխիչ աշտարակի կապարակնքման սխեմայի կազմման արժեքը՝ 15 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
3. Հաստատել կապարակնքման սխեմայի ձևաչափը՝ համաձայն Հավելվածի:
4. Զանգվածի և անկյունագծային չափումների լաբորատորիայի կանոնակարգի մեջ ավելացնել հետևյալ նախադասությունը՝
 - կազմել ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) և հեղուկ ածխաջրածնային գազալիցքավորման բաշխիչ աշտարակների (ՀԱԳԼ) կապարակնքման սխեմա՝ տնտեսվարող սուբյեկտի գրության հիման վրա:

5. Կատարել փոփոխություն մասնագետի կամ առաջատար մասնագետի պաշտոնեական հրահանգում:

6. Ծառայությունը մատուցել հայտատուի դիմումի հիման վրա, կանխավճարի կատարումից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ համակարգող տնօրենի տեղակալին:

Տնօրենի

Ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ